ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 20.01.2020թ. թիվ 15-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 7-րդ և 28-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2020 թվականի մարտի 14-ին Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9 հասցեում*** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Շիրակի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ Ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2020 թվականի փետրվարի 26-ին (սույն որոշման հրապարակման օրը) և ավարտվում է 2020 թվականի մարտի 2-ին, ժամը 18.00-ին.***

2.2. ***քարոզչությունը սկսվում է 2020 թվականի մարտի 7-ին և ավարտվում է 2020 թվականի մարտի 12-ին.***

2.3. ***2020 թվականի մարտի 13-ը համարվում է լռության օր.***

2.4. ***Ժողովի քվեարկությունը սկսվում է 2020 թվականի մարտի 14-ին ժամը 16:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 16:30-ին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Շիրակի մարզի փաստաբաններին ծանուցումը Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ուղարկելու, Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեում) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա փակցնելու, ինչպես նաև Պալատի կայքէջում հրապարակելու միջոցով:

26 փետրվարի 2020թ.
թիվ 39-Լ

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Շիրակի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

26 փետրվարի 2020թ.
թիվ 39-Լ
ք. Երևան